



ՄԱՐԿՈՍ ԵՎ ԼՈՐԵՆՏԵՍ ԿՈՆՏԱՆԴՆՈՒԼԻ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԵՊԻՍԿՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՔՐԻՍՏՈՆԵԱՆ ԱՇԽԱՐԻՆ ԵՎ ՄԱՐԿՈՍ ԵՎ ԼՈՐԵՆՏԵՍ ԿՈՆՏԱՆԴՆՈՒԼԻ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԵՊԻՍԿՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏՃԱՍԸ ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ՍԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻՈՎ

«Ցանուն Զոր եւ Որդւոյ եւ Յոգւոյ Սրբոյ. ամեն»:

«Այսօր իրեշտակը յերկնից իջեալ տան զաւետիս մարդկան. յարեալ խաչեալն եւ յարոյց զձեզ ընդ ինքեանս»
Շարական

Միեւնի՝ հավատալոր զավակներ Մեր ի Հայրենիս եւ ի Սփյուռս,

Քրիստոսի հրաշափառ Հարության ու թախտըրումն է վերստին բնածնում մեր հոգիներում: Բերկրում ենք յուղաբեր կանանց ման, ովքեր թափուր տեսան Փրկչի գերեզմանը եւ իրեշտակներից լսեցին Նրա Հարության ավտիսը: Յճում ենք վերնատանը հավաքված առաքյալների եւ Էմմաւոսի ճամփորդների պես, որոնց հարուցյալ Տերը երեսնա եւ փարատեց նրանց տարակույսներն ու տրտմությունը: Հարության լույսի շողերով այլեւս լուսավորված է խավարյալ երկիրը, բորբափված են խաչերության

Երկրի 5-ին Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցին նշեց Տեր Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը: Մայր Աթոռ Սբ Էջմիածնում Պատարագ մատուցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ աշխարհասփյուռ հայությանը փոխանցելով «Քրիստոս յարեալ ի մեռելոց» հաղթական ավետիսը:

Պատարագին ներկա էին Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանը՝ տիկնոջ հետ, ՀՀ Աժ Նախագահ Գալուստ Սահակյանը, ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը, ՀՀ կառավարության անդամներ, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ, Մայր Աթոռի բարերարներ, այս օրերին հայրենիքում գումարված ՀԲԸՄ-ի 88-րդ ընդհանուր ժողովի մասնակիցները՝ գլխավորությամբ ՀԲԸՄ-ի Նախագահի Պրեզիդենտ Սերգեյ Աբրահամյանի, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների եւ միջազգային կազմակերպությունների ղեկավարներն ու ներկայացուցիչներ, կրթության եւ մշակույթի գործիչներ, բազում ուխտավորներ, ՀԲԸՄ-ի հովանու ներքո գործող հայրոցյաց տների սաները, Մայր Աթոռի «Եօնեկեան» հանրակրթական դպրոցի աշակերտները եւ ՀԲԸՄ-ի՝ Երեւանի սկսնական խմբի անդամները:

Հայրապետական հանդիսավոր թափոռի ընթացքում ամպիոկանին կրում էին ՀՀ Աժ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի Նախագահ Արտակ Չաքրայանը, ՀՀ արդարադատության նախարարության Զեղակատարողական վարչության պետ Արթուր Օսկանյանը, «Արարելիք» թժշկական համալիրի տնօրեն Արման Բաբոյանը եւ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի Նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Ս. Պատարագին Լորին Սրբությանը՝ որպես առնթրեականներ, սպասավորում էին Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը եւ Մայր Աթոռի եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակի տնօրեն Բագրատ Եսայ Գալստյանյանը:

վիրավոր, բայց ոչ տկար, աշխարհափյուռ, բայց ոչ անհայրենիք: Կորուսյալ հայրենիքի սերը սրտում մեր ժողովուրդը պատմական Հայաստանի արեւելյան հատվածում վերակերտած պետականության մերձքո եւ Սփյուռքի համայնքներում մոր կյանք վերընձյուղեց՝ հավատալով, որ իր կենաց ծառը՝ հավատքի անասան վեմին արմատացյալ, կենսատու գործը բյանք պողպարեղծում է եւ ազգն ու հայրենիքը շենացնող զավակներ ծնում:

Հայոց Յեղասպանության համընդհանուր ճանաչման ու դատապարտման համար մեկ դար պայքարեցինք եւ շարունակում ենք պայքարել՝ արդարության հարթաճանկի հավատով: Աշխարհը երբեմն լսեց մեզ, երբեմն անտեսեց, որովհետեւ միշտ էլ, որ ունենդիր է եւ հավատարիմ Քրիստոսի բերած խաղաղության եւ մարդկանց մեջ հաճության պատգամին, ի հետեւանա որի մարդկության մորագույն պատմությունը կրկին մթագնեց մոր ցեղի:



վիշտն ու տխրությունը: Բացված է դրախտը, եւ խորտակված է դժոխքը, պարտված է մահը, եւ հաղթանակած՝ կյանքը:

Քրիստոս՝ Փրկիչ մեր Տերը, խաչի վրա Իր զոհագործությամբ եւ հրաշափառ Հարության մարդկության համար դարձավ փրկության պատարագ, որ բաշխվում է աշխարհում: Հավատալով ընդունումներին: Տերը՝ նական անգին փրկագործությունը երկնից արքայությունը ժառանգելու շնորհին է այժմանցում հավատացյալ հոգիներին, ինչպես եւ շարականագիրն ասում է. «Յարեալ խաչեալն եւ յարոյց զձեզ ընդ ինքեանս»:

Մեր ժողովրդի ընթացքը պատմության

հոլովություններում հաճախ եղավ նմանություն Քրիստոսին: Հաճախ չարչարանաց Գողգոթա բարձրացանք, խաչակից եղանք Տիրոջը եւ Նրա Հարության հավատքով հարություն առանք: Տիրոջ շնորհով մեր ժողովուրդը հաղթահարեց իր դեմ մղեցնած դավերն ու վախերը, հալածանքներն ու կոտորածները եւ վառ պահեց հույսը իր վերածնունդի, իր ապագայի ու լուսավոր կյանքի:

Քրիստոսի Սուրբ Հարության լուսապայծառ տոնի այս հիասթափ օրը մենք արդյուն ենք մահու Յեղասպանության մեր նահատակների համար: Մեկ դար առաջ էր, երբ մեր ժողովրդի զավակները, հայ եւ



քրիստոնյա լիճելու համար, անդուր տառապանքներով Յեղասպանության ենք բարկվեցին: Նրանք նահատակության պատկն ընդունեցին՝ առաքյալի խոսքի ճշմարտությունն ունենալով իրենց սրտում. «Երբ մեր այս հողեղեն տունը, որ մեր մարմինն է, աւերուի, Աստուծոյ շինուած անձեռակերտ յայտենական տուն ունենք երկնում» (Բ Կորնթ. Ե 1): Աշխարհին, ողջ մարդկությանը մեր ժողովուրդը իր նահատակությամբ եւ իր հարուցյալ կյանքով վկայեց հարության հրաշքի ճշմարտությունը: Եղանք խաչյալ, եղանք վշտահալած, բայց ոչ հուսահատ, եղանք

դասպանությունների եւ պատերազմների հավաքով: Այսօր էլ մարդկային կյանքն ալեկոծվում է հակամարտություններով ու արյունահեղություններով:

Մարդկության օրրան Երկիր մուրաբակ վրա տեղափոխվող խաղաղությունը եւ համընդհանուր հաճությունն ու համերաշխությունը տակավին մնում են որպես չիրականացված լուսաբան: «Աստուած մահ չի ստեղծի, եւ Նա չի որսխանում ողբեր կորստեան համար»,- ուսուցանում է աստվածաշնչյան իմաստությունը (Իմաստ. Ա 13):

Շարունակությունը՝ էջ 2

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՋ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏՏԱԿԱՆ ՀԻՍՈՒՄ ԲՐԻՍՏՈՍԻ ՍԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ



Ավիզը՝ էջ 1

Ավելին՝ խաչյալ և հարուցյալ Իր Միածին Որդու միջոցով Աստված պարգևել է շնորհի մահվանից հառնելու, որը պարտավորեցնում է ազգերին և պետություններին միասնական ու միահամուռ կամք դրսևորել՝ կանխելու համար մարդկության խաղաղությունն ու բարությունը վտանգող պայմանավորները, առավել մայրամեծայնությունը լինելու արդարության ու ճշմարտության հաստատման, եղեռնագործությունների համընդհանուր դատապարտման գործում, այսպես աշխարհի չառաղետ ընթացքները պիտի շարունակեն առաջնորդել դեպի նոր շնորհություններ։ Մարդկությունը պարտք ունի սրբելու աշխարհում ծովացող արցունքը, լուսավոր մանկություն երագող որը ու կարոտյալ երեխաների անօգնական հայացքների, լաց ու ճիչի առջև լռեցնելու որոտները մահաբեր զենքերի, արմատախիչ ամենուր արքայության չափերը։ Խաչելությունն աշխարհում պետք է հարստարվի և փոխարինվի հարությանը։ Միջին բարեպաշտ հավատացյալներ, այսօր, երբ ունկնդիր ենք «Յարես խաչեալն և յարոյց զձեզ ընդ ինքեան» ավետիսին, քա-

ջալերվենք հոգով, ապրենք որպես Քրիստոսի հեն մահից վեր հառնած ժողովուրդ, Քրիստոսին հավատարիմ և հարության գործությունն ունեցող ժողովուրդ։ Դիմագրավենք մեր կյանքի մարտահրավերները և նեղությունների ու դժվարությունների չարչարանաց մեր խաչը ծաղկյալ դարձնենք բոլորանվեր մեր ջանքերով, հայրենամոլությամբ ու ազգամոլությամբ նոր գործերով։ Ազգային, պետական, հասարակական մեր կյանքը, հոգեւոր-եկեղեցական մեր անդատամբ շենացներն «զի Աստուած ընդ մեզ է» ամենկրպ հավատով և քայլերն դեպի վերելքի մոր հորիզոններ և դեպի հաղթանակ մեր արդար դատի։

Քրիստոսի Սուրբ Հարության տոնի խնդրություն Մեր հոգում՝ Մեր բարեմարտաներն ենք հղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների Գալակցիաներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք ամենապատիվ Տ. Նուրիան արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մուրա-

ձյանին, բոլոր Եկեղեցիների շնորհազարդ հոգեւոր պետերին։

Մեր Տիրոջ հրաշափառ Հարության ավետիսով ողջունում ենք սուրբ Պատարագի արարողությանը ներկա Հայաստանի Հանրապետության Նախագահ տիար Մերժ Սարգսյանին և Առաջին Տիկնոջը, ողջուն ենք հղում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահ տիար Բակո Սահակյանին, հայոց պետական ավագանուն՝ մարդկային արգասալի ծառայություն և նորանոր ծնորդներն՝ համուն մեր երկրի հզորության և մեր ժողովրդի բարօրության ու առաջընթացի։ Մեր բարեմարտանքները և օրհնությունն ենք բերում այստեղ ներկա Հայկական

գործող հաջողություններ՝ ի խնդիր մեր երկրների բարեկամության ամրապնդման և գործակցության գործացման։

Քրիստոսի Հարության տոնի առիթով շնորհավորում ենք հավատավոր Մեր գալակցիներին ի սփյուռս աշխարհի և մեր Սուրբ Եկեղեցու ուխտյալ պապավորներին՝ բերելով հայրապետական Մեր սերն ու օրհնությունը և հայցելով գորակցությունն ու ամենամատառ շնորհները հարուցյալ մեր Փրկչի։

Աղոթում ենք, որ Ամենակալ Աստված Իր ամենաման որդնությունն մերք պահպանի աշխարհը համայն, գորացնի մարդկանց սրտերում խաղաղության, արդարության ու ճշմարտության հոգին և օրհնի ապահով ու երջանիկ կյանք կառուցելու մարդկային ջանքերը։ Մեր հայցն ենք բարձրացնում երկինք, որ Տերը խաղաղ պահի մեր հայրենիքը, հավատքով պա-



Բարեգործական Ընդհանուր Միության Նախագահ տիար Պերժ Սեդրակյանին և Միության անդամներին, ովքեր հայրենիքում անցկացնում են Միության տարեկան համագումարը։ Սուրբ Հարության ավետիսով Մեր օրհնությունն ենք բերում Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ու միջազգային կազմակերպությունների դեկավարներին ու ներկայացուցիչներին՝ մաղթելով

ժառ և ոգով արի՝ աշխարհասփյուռ մեր ժողովրդին և Իր կենսարար շնորհներով առաջնորդի ընթանալու դեպի կյանքի լուսավոր հորիզոններ։

Թող հարուցյալ Տիրոջ սերը և խաղաղությունը լինեն մեզ հետ՝ այսօր և միշտ և հավիտյան. ամեն։

«Քրիստոս յարես ի մեղեցի,
Օրհնեալ է Յարութիւնը Քրիստոսի»։

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՋ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՐԵՐՁՆ ԱՎԵՏԱՆԻ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Համայն հայության հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Սուրբ Աստվածածնի ավետման տոնի կապակցությամբ հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում և շնորհավորում բոլոր տիկնանց և օրհորդներին, մայրերին ու մայրության բերկրանքին սպասող կանանց։

Սուրբ Աստվածածնի բարի օրինակով՝ հոգեւոր ու բարոյական բարձր արժեքներով սիրատուն մեր մայրերն ու ընկերները կրթում և մեծացնում են աստվածասեր ու հայրենասեր զավակներ և նվիրական ու ազնիվ ջանքեր բերում հայրենի մեր երկրի և ազգային-եկեղեցական մեր կյանքի առաջընթացին ու պայծառությանը։ Մայրությանը նվիրված այս տոնը գեղեցիկ առիթ է բոլոր զավակների համար՝ երախտային սրտով վերստին նորոգելու մայրերի հանդեպ իրենց սերն ու նվիրումը և անշեղորեն ջալելու մայրական խրատներով գարդարված ու լուսավորված ճանապարհներով, ջանքի սուրբարային խոսքի համաձայն՝ մոր խրատն ու պատվիրակը շնորհի պատկ մե մարդու գլխին և ոսկի մանյակ՝ պարանոցին։

Միջին մայրեր և ընկերներ, ի խորոց սրտի Մեր աղոթքն է, որ



սուրբ Տիրամոր բարեխոսությանը երկնավոր մեր Հայրն Իր ամենախնամ Աջի հովանու ներքո պահի ու պահպանի ձեզ, ձեր ընտանիքներին ու զավակներին՝ պարգեւելով խաղաղ կյանքի բարոր և երջանիկ երկար օրեր։



Ապրիլի 7-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնեց Ս. Աստվածածնի ավետման տոնը։

Միաժամաէ Մայր տաճարում, ձեռամբ Մայր Աթոռի միաբան Սյուրիչ արքեպ Կարապետյանի, մատուցվեց սուրբ և անմահ Պատարագ։ Հայր սուրբն իր բարոգում անդրադարձավ սբ Մարիամ Աստվածածնի կերպարին, խոնարհության ու անօրինակ հավատին, որոնք դարձան բոլոր առաքելությունների թագն ու պատկը։

Պատարագի ավարտից հետո Ս. Աստվածածնի ավետման տոնի

առիթով Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Շարագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Մանուկյան՝ մատենադարանի շենքում հանդիպեց Մայր Աթոռի կառույցներում պաշտոնավարող աշխատակցուհիների հետ։

Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի պատասխանատու Նաթան արք. Յովհաննիսյանի ողջու-

նի խոսքից հետո Նորին Սրբությունն իր հայրական օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց ամենքին։

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը խոսեց Աստվածամոր կերպարի ու առաքելության մասին՝ ներկաներին հորդորելով անդրադառնալ Տիրամոր առաքելի անձին, որը դարձրեց շարունակ ներշնչել և նաեւ հայ կանանց, դարձել նրանց համար խոնարհության և վեհության կենդանի օրինակ։ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծեց նաեւ այն, որ ներկա ժամանակներում, երբ աշխարհում նկատվում է բարոյական արժեքների անկում, իսկ հայրենիքը դիմագրավում է բազում փորձությունների, հայ կինը չպետք է տկարանալ իր անհատականության և երջանկության համուն ազգային-ընտանեկան արժեքների անխաթար պահպանման։

Գարեգին Բ. Հայրապետը, կարեւորելով Մայր Աթոռի աշխատակցուհիների բերած ծառայությունը եկեղեցու առաքելության իրականացման նվիրական գործում, իր գնահատանքն ու օրհնությունը փոխանցեց նրանց՝ մաղթելով Տիրոջ ամենախնամ Աջի ներքո խաղաղ և բարոր կյանք։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 19-ՐԴ ՂԱՐԻ 2-ՐԴ ԿԵՄԻՆ ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄՅԱՆ



19-րդ դարի հայ հասարակական կյանքն ու միտքն տվել են ակնախավոր բազմաթիվ դեմքեր, որոնցից մեկն էլ Մկրտիչ Խրիմյանն էր, որը մեծ դեր կատարեց ժողովրդի ազգային ինքնագործունեության ու արժանապատվության զգացումի արթնացման գործում: Մկրտիչ Խրիմյանը (Մկրտիչ Ա Վանեցի, 1892-1907) ծնվել է 1820-ի ապրիլի 4-ին (16-ին) Վան քաղաքի Հայկուկյաններ թաղամասում՝ Կրքմցոց կամ Խրիմցոց տանը: Տարագազործ հայոց զբաղվում էր նաեւ վաճառականությամբ, իր պատրաստած հագուստները Վանից տանում էր Դրիմ (այստեղից էլ՝ նրանց ազգանունը)՝ վաճառելու: Մանուկ Մկրտիչ դաստիարակության գործը հանձն է առնում հորեղբայրը՝ հաջատուրը, որն ուներ կտավի արհեստանոց, ուր մի քանի երեխայի, այդ թվում նաեւ Մկրտիչին, սովորեցնում էր կտավագործություն: Սակայն նա երկար չստացավ: 17 տարեկան էր Մկրտիչը, երբ 1837-ին զոհվեց հորեղբորից: Ծանր կորուստը նա արտահայտեց հետո՝ 1876 թ., երբ հորեղբոր հիշատակին նվիրեց «Կաջի ճառ» կրոնաքաղաքագիտական գործը:

Վանում այդ ժամանակ կանոնավոր դպրոց չկար, եւ Մկրտիչը գնում է Լիմ եւ Կոտեց կղզիներ: 1842-ի ամռանը երեք ընկերների հետ պատանի Մկրտիչը հիկն ամիս շրջագայում է հայրենի Վասպուրականի համարյա բոլոր գավառներում: Որոշ պատանի անց Խրիմյանը մեկնում է Կոստանդնուպոլիս: Երկու տարի կրճակարարությամբ պահպանելով իր գոյությունը՝ Մկրտիչն զբաղվում է նաեւ ինքնակրթությամբ, կապեր հաստատում տեղի հայտնի մտավորականների հետ: 1846-ին նա կրկին վերադառնում է Վան, մահացել էր հայրը: Մոր թախանձանքով երիտասարդն ամուսնանում է Սեփյան գերդաստանի օրիորդ Մարիամի հետ: Այստեղ ծնվում է նրա դուստրը՝ Թագուհին: Խրիմյանը, սակայն, Վանում երկար չի մնում: 1847 թ. Մկրտիչն ընկերը՝ Ազրիպաս Դաքայանի հետ անցնում է Ղարսկառան, ապա՝ հասնում Ալեքսանդրապոլ: Այնտեղ 6-7 ամիս մնալուց հետո մեկնում է Թիֆլիս, ապա Բաթումից ճանապարհվում է Կ. Պոլիս: Նախքան Թիֆլիս եւ Կ. Պոլիս հասնելը՝ Մկրտիչը լինում է Էջմիածնում, ներկայանում կաթողիկոսին՝ նրանից թախանձանքով ուսումը շարունակելու թույլտվություն: Սակայն Հայրապետը զարմանալիորեն մերժում է Խրիմյանի խնդրանքը: Նա ինչ իմաստ, որ ուսումը շարունակելու հնարավորությունից զրկում է մի մարդու, որը հետագայում բազմելու է իր իսկ զբաղեցրած գահին:

1848-ին Խրիմյանը Կ. Պոլսի Իսազյուղի աղջիկների նորաբաց վարժարանում զբաղվում է ուսուցչությամբ: Շուտով նրա հետ սերտ կապեր են հաստատում մայրաքաղաքում ապրող ազդեցիկ Օտյան եւ Ալվատյան ընտանիքների անդամները: 1851-ին Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը նրան հանձնարարում է մեկնել Կրիկիա, ուսումնասիրել կրթական գործի վիճակը, հոգ տանել գործը բավարար հիմքերի վրա դնելու համար: Յոթնամյա ղեկավարները հետո՝ 1853 թ., Մկրտիչը վերադառնում է Վան, ուր նրան ծանր վիճակ է սպասվում. մահացել էին մայրը, կինը, աղջիկը: Հոգեկան խռովքին չէի վրա: Սակայն շուտով օթափվում է եւ որոշում ընդմիջող կյանքից Հայոց եկեղեցուն ծառայելու: 1854-ի փետրվարի 25-ին Աթոսյանում ձեռնադրվում է վարդապետ եւ անցնելով Վարազ՝ որոշում է վերանվերականգնել «ափսիական այդ փոքրիկ Վենետիկը», այս վանքում հիմնել տպարան եւ վարժարան: Սակայն միաբանությունը թշնամանքով է դի-

մավորում Խրիմյանին, եւ նա կրկին վերադառնում է Պոլիս:

1848-ին ֆրանսիական հեղափոխության ազդեցության ներքո Փարիզից եկեալ մի խումբ երիտասարդներ գլխավորում էին հայ գաղթաբանի հասարակական կյանքը, որը հետագայում հայտնի դարձավ «սահմանադրական շարժում» անունով: Շարժմանը համակրում էր նաեւ Խրիմյանը եւ մասնակցում հավաքներին: Սակայն Խրիմյանը գտնում էր, որ ժողովրդի «արթնացման» համար հարկավոր էր առաջին հերթին տպագիր խոսք, պարբերական մամուլ: 1855-ի հունիսին լույս է տեսնում «Արծուի Վասպուրական» ամսագիրը: Զանի որ Կ. Պոլիսը հեռու էր բուն Հայաստանից, Խրիմյանը վերադարձավ Վան եւ ստանձնեց Վարազ վանքի վանահոր պաշտոնը եւ այստեղ էլ 1857-ի մարտի 1-ին բացեց Վարազա ժառանգավորաց վարժարանը: Սակայն հալածանքներն ու դավերը հասան այն աստիճանի, որ թշնամիները վարձակա քրդերի միջոցով մի քանի անգամ մահափորձ կազմակերպեցին նրա դեմ, թեպետ այդ բոլորը որեւէ չափով չկանգնեցին եւ չվատեցրին Խրիմյանին: Ավելին՝ ձեռավորեց խրիմյանական հոսանք, որի շարքերում էին Գ. Մովսեսյանցը, Ա. Թիմախյանը, Նաթանյանը եւ Տեխկանց եղբայրները, Գ. Շերեցը, Գ. Աղվանյանցը եւ այլք: Այստեղ եկավ նաեւ երիտասարդ Բաժիթին, եւ փաստորեն Վանում փայլատեղեց նրա բանաստեղծական տարակնոքը:

Ինչպես ժառանգավորացում, այնպես էլ նոր բացվելիք բոլոր վարժարաններում Խրիմյանը պատվիրում է «գլխավոր ուսանելիք նյութը դարձնել հայրենասիրությունը»։ «Այս մեր առաջին պարտքն է, այս մեր վերջին նպատակն է, Աստուծով ապրել հայրենիքս համար, հուսով մեռանել հայրենիքս համար»։

1862-ին «Արծուի Վասպուրական» ամսագրի խմբագիրը եւ գլխավոր աշխատակից Գ. Աղվանյանցը հեռանում են Վարազից, մեկնում Տարոն, ձեռնամուխ լինում առավել դժվարի գործի: Առանց դադարեցնելու մասին հայտարարության՝ հանդեսն այնտեղ լույս չի տեսնում, քանզի հեռվից նրանց չէին կարող «օգնության հասնել»։ Վարազում լույս տեսնող ամսագրին, որը, ի դեպ, մեծ դեր կատարեց Վասպուրականի հայության հոգեւոր արթնացման գործընթացում:

Մ. Խրիմյանի՝ Վասպուրականում ծավալած հայրենասիր գործունեության համբավը հասել էր Տարոն, Մուշ: Բանիմաց հոգեւոր առաջնորդից զուրկ տարոնահայությունը իր ցանկությունը հանրագրեթի ձեռով ներկայացրեց Կ. Պոլսի ժողովի առաջ: Պոլսի Ազգային առժամանակյա խառն ժողովը Խրիմյանին նշանակեց Տարոնի հոգեւոր առաջնորդ եւ Մ. Կարապետ վանքի վանահայր՝ նրա վրա թողնելով նաեւ Վարազ վանահայրությունը:

1863 թ. ապրիլից Մ. Կարապետ վանքում սկսվում է հրատարակվել «Լրատար Արժվիկ Տարոնի» երկշաբաթաթերթը, որի խմբագիրը կրկին Գ. Աղվանյանցն էր:

Տարոնահայությունն ըստ արժանվույն գնահատեց իր հոգեւոր նոր առաջնորդին: Այդ տարիներին տարոնահայությունն էր, որ Խրիմյանին տվեց նրա որը կյանքի ընթացքում ուղեկցող պատվանունը՝ Հայրիկ: Խրիմյանի համագային ճանաչվող գազազեցնում էր Վասպուրականի եւ Տարոնի թուրքաւետ հայ աղաներին, որոնց հաջողվում է գեղեցիկ ուժով վանքից դուրս հանել Խրիմյանին: Խրիմյանը մեկնում է Կարին՝ այնտեղից Տարոնի հոգեւոր գործերը վարելու: Պոլսի Կենտրոնական վարչությանը դիմումներ հղելու նպատակով: Դա 1865-ի ամռանն էր: Այս անգամ արդեն մեկընդմիջող փակվում են «Արժվիկ Տարոնի» երկշաբաթաթերթը, Մ. Կարապետի ժառանգավորացը, Տարոնի մյուս վանքներում բացված վարժարանները: Այդան հաջողությամբ սկսված լուսավորական մեծ գործն ընդհատվում է: Նրանց Խրիմյանին մեղադրում էին նաեւ հակապետական գործունեության մեջ: Եղևորանքը ծանր էր: Խրիմյանը հարկադրված էր 1866-ին մեկնել Կ. Պոլիս՝ անձամբ ծխելու այդ փաստը, ապա դատ բացելով Վասպուրականում եւ այլուր չարագործություններ կատարող թուրք եւ բուլղ աղաների դեմ՝ նրանց աջորդել է տալիս Ռոմիլիս: Այս հանգամանքն ավելի ժողովրդականացրեց նրան, որին հաջորդեցին նրա նշանակումը «Եպիսկոպոս Գլխավ վանքի», նույն թվականին՝ Եպիսկոպոս օծվել Էջմիածնի Մայր Աթոռում, 1868 թ. մայիսին, Կարինից եւ Պոլսից հետո, մի քանի ամսով Մ. Խրիմյանը վերադառնում է հայրենի բուլղը՝ Վարազ վանքը, իսկ սեպտեմբերին Երեմիա Տեխկանցի հետ մեկնում է Էջմիածին՝ Եպիսկոպոս ձեռնադրվելու: 1869-ի սեպտեմբերի 4-ին Խրիմյանն ընտրվում է Պոլսի պատրիարքի պաշտոնում, ընդ որում՝ հակառակ սուլթանի եւ Բարձր դռան կամքի:

Շարունակություն է 7

Հովհան ԾՆՆԵՑԻՆ ընդդեմ պավիկյանների

Մկրտիչ թիվ 6

Պավիկյան գաղափարախոսությունը համակարգված, հիմնավորված ամբողջական ուսմունքն էր: Գաղափարախոսությունը հիմնված էր գնոստիցիզմի եւ վաղմիջնադարյան այլ ուղանկների գաղափարների, ուսմունքների վրա: Նրանց եկեղեցին կոչում էին «դեւերի կացարան», իսկ աղոթատեղի էին անվանում իրենց ժողովարանները: Նրանց հոգեւորականները կոչվում էին սինեկդեմոսներ եւ նույնպես, սինեկդեմոսներից էլ ընտրվում էր աղանդապետը: Պավիկյան շարժման նշանավոր պարագլուխներից էր Մեդգիոսը, ով շարժման գլուխ էր անցել 801-ից: Նրա գործունեության շրջանի ճշտումը կարելի է այն տեսակետից, որ նրա ժամանակ պավիկյան շարժումը վերածվում է գինված ապստամբության:

Մեդգիոս-Տյուրքիկոսի սպանությունից հետո պավիկյանները, իրենց շարքերում հուզումների ու խառնակությունների տեղիք չտալու համար, նոր աղանդապետ չեն ընտրել, աղանդը դեկավարում էին սինեկդեմոսների՝ միջեւ Կարբեսի հայտնվելը: Աղանդն ուներ մի հատուկ խումբ, որի անդամները կոչվում էին աստատներ. սրանց հաշվեհարդար էին տեսնում իրենց գաղափարական հակառակորդների հետ:

Համայնքներում տարածված են եղել արյունապղծական հարաբերությունները: Պաշտելով քարերը եւ ծառերը՝ նրանց պաշտամունք էին կատարում բուլղների, սարերի վրա: Դեմ էին արտահայտվում Դրոշմի խորհրդին՝ պատճառաբանելով, թե մյուսուհով օծվում են նաեւ անշունչ առարկաները, սակայն հենց իրենց էին պաշտում անկենդանիները: Թեեւ ընդունում էին Մ. Երողությունը, սակայն դրա տակ բոլորովին այլ բան էին հասկանում, քան քրիստոնեական եկեղեցին: Մերժում էին մարգարեներին եւ բոլոր սրբերին: Դուրսու առաքյալին անարգում եւ չէին ընդունում այն պատճառով, որ իբր նա է մտցրել վանական սքեմն ու զգեստը: Նրանց հոգեւորականներն իրենց հանդերձանքով չէին տարբերվում աղանդի շարքային անդամներից: Չնայած չէին ընդունում խաչը, սակայն հիվանդանալիս նրանցից ոմանք խաչը դնում էին իրենց մարմնի վրա, իսկ առողջանալուց հետո այն ջարդում եւ կրակն էին նետում: Նրանք, հեռեւեղով Մանիի խոսքին, հեշտությամբ նաեւ կեղծիք էին հորինում:

Պավիկյանները չէին տարբերում քրիստոնեական աստվածապաշտությունը հեթանոսական բազմաստված պաշտամունքից եւ քրիստոնյաներին անվանում էին կռապաշտներ: Այս ամենի դեմ Օծնեցին գրում է. «Մեք գլխալոյ միաձնի որդույն պաշտենք զպատկեր եւ զնշան յաղթութեան. իսկ զհեթանոսանիւն եւ անթիւ պաշտամոքսն ընդդէնցոյ աստանայ...»: Իսկական կռապաշտներին նա հիշեցնում է Մադոմսերգուի խոսքերը. «Ամաչեսցես մանեքեան որ երկիրպագանես կոց, եւ ոյք պար-

ծին ի դրաշէալս իւրեանց, երկիրպագցես նմա ամենայն իրեշտալեք նորա...» (Մադոմ ԴՆ 7): Այդ հեթանոսական պատկերասրահների հիմքը նա համարում էր գնոստիկականությունը եւ մանիքեությունը: Ընդհանրապես Օծնեցու աստվածաբանության մեջ հանդիպում ենք գնոստիկականների եւ մանիքեականների ուղղված մեղադրանքներին:

Պավիկյանները քարոզում էին, որ գոյություն ունի երկու աստված՝ բարի եւ չար: Այս աշխարհի նյութական եւ տեսանելի ամեն ինչ ստեղծել է չար աստվածը, իսկ ինչ որ հոգեւոր է եւ անտեսանելի՝ բարին: Բարի Արարչին ճանաչողներն եւ ընդունողները, որ ըստ իրենց՝ իրենք էին, պետք է պայքարեին չար աստծու դեմ: Ընդհանուր առմամբ մերժում էին եկեղեցին՝ քարոզելով, որ այն շեղվել է ճշմարտությունից, եւ նրա դավաճանքը ճշմարտ չէ: Ապա հայտարարում էին, որ իրենք են միակ ճշմարիտ ուսմունքի հետեւորդները:



բարում էին, որ իրենք են միակ ճշմարիտ ուսմունքի հետեւորդները: Նրանք՝ եկեղեցին չընդունելու անդադար Օծնեցին իր ճառում նշում է, որ այն քրիստոսասեր հավատացյալները կառուցել են Աստծո համար, ով իջնում է այնտեղ իրեշտակների սպասավորող բազմություններով, այսինքն՝ տաճարը դիմում է որպէս Տիրոջ տուն: Հ. Զյուսեյանն ուշադրություն է դարձնում նրա՝ եկեղեցու հետ կապված հարցին. «Խորհրդածի եկեղեցի եւ Նոյեան տապալին ներքնատուն եւ միջնատուն եւ վերնածէրուն, նոյնպէս եւ եկեղեցի՝ զարտաքին գալիք եւ գտաճիք եւ զարդաւորեան խորան» (Դովագետեր հայ միջնադարյան արվեստի աստվածաբանության, Էջմիածին, 1995, էջ 142), այսինքն՝ եկեղեցու արտաքին գալիքը նմանեցվում է տապալին ներքնատուն, եկեղեցին՝ միջնատուն, իսկ վերնածէրունը՝ սրբության խորանին: Իսկ եկեղեցին զարդարվում էր Տիրոջ պատկերով եւ խաչով, այսինքն՝ տերուսական նշանով:

Շարունակություն է 7

Ն. Ս. ՖՐԱՆՅԻՍԿՈՍ ԴԱԴԻ ԽՈՍՔԸ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԹԿ ԶՈՌՄԻ ՍՈՒՐԲ ԴԵՏՐՈՍԻ ՏԱԶԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Սիրելի՛ հայ եղբայրներ եւ քույրեր,

Սիրելի՛ եղբայրներ եւ քույրեր,

Ես տարբեր առիթներով մեր ժամանակը սահմանել եմ որպես պատերազմի ժամանակաշրջան, համաշխարհային մի երրորդ պատերազմի, որ կատարվում է հատված առ հատված, եւ որի ընթացքում ամեն օր ականատես եմ ինչ-որ վայրագ ճորագործությունների, արյունաբորւ կոտորածների եւ ավերելու խնթությանը: Ցավով, այսօր մենք նույնպես լսում ենք մեր շատ անպաշտպան քույրերի ու եղբայրների խնդրված եւ անտեսված ողբը, ովքեր Զրիստոսի հանդեպ իրենց հավատքի կամ իրենց ազգային պատկանելության պատճառով հրապարակալորեն ու անզթոքեն սպանվում են, գլխատվում, խաչվում, ողջ-ողջ այրվում կամ էլ հարկադրաբար լքում իրենց հողերը: Այսօր ես մի տեսակ ցեղասպանություն ենք ապրում, որի պատճառը համընդհանուր անտարբերությունն է: «Չգիտեմ, մի՞թե ես իմ եղբոր պահակն եմ» (Մկն. Դ-9):

Անցած դարի ընթացքում մեր մարդկային ընտանիքը վերադարձ է գտնվում այն եւ անխախտ եղբորդեղբայրություն: Առաջինն այն է, որ համընդհանուր կերպով համարվում է «20-րդ դարի առաջին ցեղասպանություն», հարկաձեղ է ձեռք՝ հայ ազգին՝ առաջին քրիստոնե ազգին, ինչպես նաեւ կաթոլիկ եւ ուղղափառ սիրիացիների, ասորիների, քաղցեացիների եւ հույների. սպանվելիս եպիսկոպոսներ, կրոնավորներ, քահանաներ, կանայք եւ տղամարդիկ, տարեցներ եւ անգամ անպաշտպան երեխաներ ու հիվանդներ: Մյուս երկուսն իրականացվեցին Նացիզմի եւ ստալինիզմի կողմից: Վերջին տարիներին եւս կատարվեցին գանգաձային սպանություններ Կամբոջայում, Բուսնիայում, Բուլղարիայում եւ Բոսնիայում: Թվում է, թե մարդկությունն ի վիճակի չէ վերջ դնելու անմեղ արյան հեղմանը: Թվում է՝ խանդավառությունը, որ առաջացել էր երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին, ցրվել է եւ հիմա չէ անհետանում է: Թվում է՝ մարդկությունը հրաժարվում է սեփական սխալներից դառ քաղցած, քանզի այսօր ես կան մարդիկ, ովքեր փորձում են վերացնել մյուսներին՝ մի քանիսի աշակերտությամբ եւ հանցակից լուրջությամբ ուրիշների, ովքեր պարզապես դիտում են կոյրից: Մենք դեռ չենք սովորել, որ «պատերազմն անմիտ խնեցությունն է», «ապարդյուն կոտորած»:


Սիրելի՛ հայ քրիստոնյաներ, այսօր վշտակիր սրտով, բայց միեւնոյն ժամանակ հարուցալ Տիրոջ հանդեպ մեծ հույսով հիշատակում ենք այդ ողբերգական իրադարձության հարյուրամյակը, այն ահեղի եւ անխմատ կոտորածը, որի դաժանությունը ստիպված եղան կրել ձեր նախնիները: Անհրաժեշտ է եւ առավել պարտականություն է հար-

գել նրանց հիշատակը, քանզի երբ չկա հիշողություն, նշանակում է՝ չարիքը դեռ բաց է պահում վերջը: Չարը կոծկելը կամ ժխտելը նման են վերջի, որ առանց վիրակապվելու շարունակում է արնահոսել:

Ես ուղղունում եմ ձեզ ջերմությամբ եւ շնորհակալություն

Ձերո՛ր Սրբություն, սիրեցյալ եղբայր ի Զրիստոս,

Աստծո ողորմած կամքով վերստին այցելել ենք ձեռք: Եկել ենք Հայաստանի Հանրապետության նախագահ տիար Սերժ Սարգսյանի, Մեր հոգեւոր եղբոր՝ Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի,



հայրսնում ձեզ՝ ձեր վկայության համար:

Երախտագիտությամբ շնորհակալություն եմ հայտնում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին՝ ներկայություն համար:

Իմ ջերմ ողջույններն եմ ուղղում նաեւ իմ պատրիարք եւ եպիսկոպոս եղբայրներին՝ Նորին Սրբություն Գարեգին Բ Տալրազույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, Նորին Սրբություն Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Ամենապատիվ Ներսէս Պետրոս ԺԶ-ին, Հայ Կաթողիկոսների Կիլիկիո Պատրիարքին եւ Հայ Առաքելական Եկեղեցու Կաթողիկոսություններին եւ Հայ Կաթողիկե Եկեղեցու Պատրիարքությունը:



Խիստ համոզում ունեմ, որ չարը երբեք Աստծուց չէ, Ով անսահման բարի է եւ ամուր մնալով մեր դավանանքի մեջ՝ եկել հավատաւած, որ դաժանությունը երբեք չի կարող համարվել Աստծո ձեռքի գործ, եւ ավելին՝ այն բացարձակորեն չի կարող արդարացվել Նրա Սուրբ Ամված: Եկե՛ք շարունակենք այս արարողությունը՝ մեր հայացքը սեւեռելով մեծախնայ հարկաբերություն առած, մասկված եւ չարի հանդեպ հաղթություն տարած Հիսուս Զրիստոսին:

Հայ Եկեղեցու եպիսկոպոսաց դասի եւ աշխարհասփյուռ հավատավոր Մեր գաղակների ներկայացուցիչներն են՝ Սուրբ Հարություն խնդությունը մեր հոգում, քրիստոնեական փրկող եղբայրական Մեր ողջուն եւ բարենախառնությունը բերելով Ձերո՛ր Սրբությանը եւ մեր աղբյուրներով մասնակից լինելու Հայոց ցեղասպանության 100-րդ տարեկից առթիվ Ձեր կողմից մատուցված սրբազան Պատարագին՝ Սուրբ Պետրոսի տաճարում:

Մեր քույր Եկեղեցիների բարեկամությունը վկայող սրբազան այս արարողության ընթացքում, ի գոհունակություն Մեզ եւ մեր ժողովրդի, Հայ Եկեղեցու հայրերից սուրբ Գրիգոր Նարեկացին Ձերո՛ր Սրբության կողմից հռչակվեց Կաթողիկե Եկեղեցու սահմանումով՝ «Կարգա-

Նարեկացի ծնած մեր ժողովուրդը քրիստոնեական հավատքի եւ ազգային ինքնության համար իր պատմության ընթացքում բազում արհավիրքներ է տեսել, փորձությունների դիմակայել: Մեկ դար առաջ Օսմանյան Թուրքիայում մեր ժողովրդի հանդեպ իրագործվեց ցեղասպանության ահեղի ոճիրը: Կանխամտածված ծրագրով, անկարագրելի դաժանությամբ սպանվեց մեկ եւ կես միլիոն հայ: Հիսնավոր մեր ժողովուրդն արմատախառնվեց իր սփռված ընտանիքներին: Ոչինչ, սակայն, ոչ տառապանք, ոչ հալածանք, ոչ անգամ մահ չստանալից մեր ժողովրդին եւ չեղանցեցին իր սուրբ հավատքից: Ազգովի նահատակության հոգեւոր սխրանքի ողջ մեծությունն է այսօր պատկերվում մեր առջեւ, որը դրսեւորեց մեր ժողովուրդը՝ կրկին հռչակելով դեռեւս 5-րդ դարում սահմանած իր ինքնության բանաձեւը, որ՝ «քրիստոնեությունն ունենք ոչ իբրեւ հանդերձ, այլ իբրեւ մշակի գույն» (Եղիշե պատմիչ):

Աստծո գթառատ ողորմությամբ մեր ժողովուրդն ուղղել է եղե՛նական մեր մեջքը, նոր կյանք վերնաշնչելով Սփյուռքի համայնքներում եւ Հայաստանի արեւելյան հատվածում կատարված կեղծապատկերներին հովանու ներքո: Վերելքի իր ուղին մեր ժողովուրդը կերտել է՝ դիմակայելով բազում զինակներին ու զինվորներին: Այսօր էլ մեր ժողովուրդն ապրում է թուրքական եւ Ադրբեջանի կողմից իրականացվող չղջափական մեջ, պայքարում Լեռնային Ղարաբաղի մեր ժողովրդի ազատ կյանքի համար եւ արդարապես հաղթանակի հավատով շարունակում ջանքերը՝ հասնել իր իրավունքների, Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչման եւ իր արդար պահանջատիրության:

Ժամանակին մարդկությունը չկարողացավ կանխել Հայոց ցեղասպանությունը, վերացնել դրա հետեւանքները եւ ականատեսը դավ Յուդոն, Կամբոջայի, Բուսնիայի, Դարֆուրի եւ այլ ցեղասպանություններին: Այսօր էլ հանրապետությունների, պատերազմների, ահաբեկությունների պատճառով մարդիկ ու ազգեր նեղության ու կարոտության մեջ են, հավանում ու իրենց կյանքով են վճարում հավատքի համար: Մենք հաղթանակ ենք, որ Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչմանը, որպես արդարության իրագործման եւ իրավունքների հաստատման ազդեցիկ օրինակ, կնվաճենք մեր ապագան ու արդար աշխարհի կերտմանը: Այս իմաստով Հայոց ցեղասպանության 100-րդ տարեկիցը հրավեր է աշխարհին անտարբեր չգտնվելու մարդկային տառապանքի ու կոտորածի նահատակությունների հանդեպ եւ գործադրելու առավել ջանքեր՝ դարձնելով մեկ եւ կանխելու համար մարդկության դեմ գործվող ոճիրները: Սա է այն պտուղը, որ պիտի աճի նահատակության արմատից: Հայոց ցեղասպանության 100-րդ տարեկիցի առիթով մատուցված այս սրբազան Պատարագին, մեր նահատակների նվիրական հիշատակի առջեւ Մենք երախտագետ զգացումով ենք անդրադառնում, որ Ձերո՛ր Սրբության երանաշնորհ

Նախորդներից Բենեդիկտոս 15-րդ Պապը բողոքի ձայն բարձրացրեց՝ ընդդեմ հայերի ցեղասպանության, իսկ սուրբ Հովհաննէս Պողոս Բ Պապը Մեզ հետ համատեղ հայտարարությամբ 2001 թվականին ճանաչել եւ դատապարտել է Հայոց ցեղասպանությունը: Այս առումով կարելի է նշանակություն ունի նաեւ Կաթողիկոսի արխիվներում պահվող փաստաթղթերի հրապարակումը: Մեր ժողովուրդը շնորհակալությամբ է իիշուժ բոլոր նրանց, ովքեր ոչ միայն բարձրաձայնեցին Հայոց ցեղասպանության մասին եւ դատապարտեցին, այլ նաեւ մարդասիրական առաքելություններ իրականացրեցին՝ խնամելով որբերին, ապաստան տալով վերադարձներին, օգնելով հողթուներին բազմատեսակ ղեկավարություններ:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարեկիցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ապրիլի 23-ին, աղոթական մասնակցությամբ քույր Եկեղեցիների, այդ թվում՝ Ձերո՛ր Սրբության ներկայացուցիչների, բարձրաստիճան հյուրերի ու աշխարհասփյուռ մեր ժողովրդի բազմաթիվ զավակների, սրբազանվելու են վասն հավատո եւ վասն հայրենյաց մարտիրոսության պատվին ընդունված մեր քույրավոր նահատակները: Երկնային գործերին միացած սուրբ նահատակների բարեխոսություններն ենք հայցելու, որ աստվածային խաղաղությունը հեղվի մարդկային կյանքին, եւ աշխարհում տեղ չգտնեն ցեղասպանության ողբերգությունները:

Սիրեցյալ՝ եղբայր ի Զրիստոս, միակամայն կկտու՛մ Ձեք միտքը, որ նահատակությունը հարաւանական տարբերություններ չի ճանաչում: Աղոթելու, նահատակվելու միակողմն են մեզ՝ որպես գաղկներ ու ծառաներ մեկ Տիրոջ՝ Հիսուս Զրիստոսի, համախմբվելու ու միասնական ջանքեր գործադրելու՝ հասնել աշխարհում սիրո, արդարության, խաղաղության հաստատման եւ քաղաքակրթությունների ու կրոնների եկվիստության, որին կցում է մեզ տարբերական պատգամը: Հոգ տարեք միմյանց սիրով եւ բարի գործերի յորդորելով» (Եբր. Ժ 24):

Թող Սուրբ Պետրոսի սրբազան այս տաճարում մեր սրտերից երկինք բարձրացող աղոթքն ու հայցը լսելի լինեն երկնավոր մեր Հորը՝ օրհնելու եւ ճշմարտ ուղիներով առաջնորդելու բոլոր ջանքերը, որ գործադրվում են հաւուն երկրի վրա խաղաղության եւ մարդկության ապահով ու բարոյ կյանքի: Աղոթում ենք Ձերո՛ր Սրբության առողջության, Կաթողիկե Եկեղեցու պայծառության համար եւ Աստծո հովանին ու բարիքները հայցում ամենքիս Գրիգոր Նարեկացի տիեզերալույս վարդապետի սրտաբան խոսքով:

Իսկ Հոււ, առ ամենայն հմարս զորաւոր,

Մատո՛ր իճն ոգի փրկութեան,
Աշ պաշտպանութեան,
Ճնն՛ն այցելութեան,
Հրաման բարութեան,
Եղս որդունքս իմ,
Բան նորդութեան,
պատճառ բարութեան,
Գաւազան կենաց օգնութեան:
Չի դու եւ յոյս ապաւնութեան,
Տէր Յիսուս Զրիստոս,
Օրհնեա՛ւ լ ընդ Հօր, Նզովո՛ղ

Սրբով յախտեա՛ս յախտեմից: Ամեն:
(Բան ԾԹ)

Հովհան Թճնեցի ընդդեմ պավիկյանների

Սկզբը՝ էջ 3

Օձնեցի իր ճառի հիմնական մասը նվիրել է պավիկյանների գաղափարախոսության մեջ մեծ տեղ գրավող պատկերամարտության խնդրին՝ հերքելով պավիկյանների՝ եկեղեցուն ուղղված մեղադրանքը: Նա նշում է, որ պատկերների դեմ ուղղված պայքարը պետք է դիտարկել ընդդեմ խաչի, որովհետեւ ընդդեմ լով սրբապատկերները՝ պավիկյանները մեղծում էին նաեւ Ս. Նշանը: Օձնեցի ներկայացնում է հեթանոսական կուռքերին եւ արձաններին երկրպագությունը՝ կուռքերը համարելով դիվաբնակ եւ դիվաշունչ: Քննադատելով պավիկյաններին՝ Օձնեցի գրում է. «Մեք զայն միայն յիւրաքանչիւրոցն բացորոշեալ պատուենք ի նիւթոց, յորոց վերայ զնմանութիւն պատկերին Զրիստոսի եւ խաչի իւրոյ ձեւացուցանիցենք»:

Պավիկյաններն անարգում, չէին ընդունում խաչը՝ այն համարելով մահվան, պատժի գործիք (ինչպես այսօր որոշ աղանդավորներ), բայց ի հակադրություն նրանց՝ Օձնեցին նշում է, որ քրիստոնյաները, խաչն ընդունելով, հավատում են Զրիստոսին եւ Նրա հարությանը, աստվածային զորությանը: Նյութը, որից պատրաստված է խաչը, կարող է տարբեր լինել, սակայն դա ոչ մի

րոնք թողած սուրբ սեղանը եւ սուրբ խորանը՝ պատվեցին նրանց պարունակածը՝ ոսկին եւ զոհը. «Կո՛րի փառիւցի, նախ մաքրի՛ր բաժակի եւ պնակի ներսը, որպէսզի դրանց դուրսն էլ մաքուր լինի» (Մատթ. ԻԳ 26): Խաչը հոգեկան եւ մարմնական հիվանդությունների համար բուժիչ է, դեւերին զարհուրեցնող, սարսափեցնող: Օձնեցի զարգացնում է այն մոտեցումը, որ խաչն առանձնահատուկ դերակատարում է իմաստ ունի մարդկության փրկության գործում. Զրիստոսի խաչելությամբ եւ հարությանը այն դարձել է փրկության միջոց: Այն քրիստոնյայի համար պակ է, որ բացատրում է Զրիստոսի կյանքի իմաստը, այն՝ որ Հիսուսն ի սեր մարդկության եկավ աշխարհ, չարքարվեց, խաչվեց եւ Իր խաչելությամբ սոր իմաստ ու խորհուրդ տվեց խաչին: Մինչեւ Զրիստոսը խաչը պատմի գործիք էր եւ մահ էր խորհրդանշում, Փրկչի խաչելությամբ դարձավ մահվան նկատմամբ հաղթանակի եւ կյանքի խորհուրդ: Պողոս առաքյալը գրում է. «Քավ լիցի, որ ես պարծեամ այլ բանով, քան միայն մեր Տեր Հիսուս Զրիստոսի խաչով» (Պաղատ. 2 14): Օձնեցին հիմնական նկարագրությունով, խաչը համեմատելով եւ նմանեցնելով կենաց ծառի հետ, գրում է. «Յայնմ



նշանակություն չունի. բոլորի մեջ էլ նույն գործություն ենք ընդունում: Երբ տեսնում ենք քարից կամ ոսկուց պատրաստված խաչ, մենք հավատ չենք ընծայում նյութին, որ կռապաշտ կոչվեք, այլ՝ Աստծուն. դրանով մենք տարբերվում ենք կռապաշտ հեթանոսներից, որոնք ամբողջ նյութն են կարծում աստված եւ պաշտում: Նյութն անկեղտն է, եւ թե նրա մեջ աստվածային ուժ, գործություն չլինեն, կենդանի մարդկանց չի կարող օգնել: Մենք ընդունում ենք գործությունը, պաշտում գործությունը, ոչ թե նյութը: Նույն ձեռով կիրառելով օծման սուրբ յուղը՝ մենք ընդունում ենք դրա միջոցով օրհնությունն ու շնորհից եւ չենք պաշտում զուտ նյութը՝ յուղը: Սա կարծես հիշեցնում է Նորալատոնական այն միտքը, որ Աստծո ջանքերի մեջ են բնակվում է ինչ-որ բան Արարից: Բերելով օրինակներ նաեւ Հին Կտավարանից՝ Օձնեցին նշում է, որ ճշմարիտ հավատի պարագայում ընդունվում է պաշտվում է գործությունը, ոչ թե նյութը. ինչպե՛ս կարող ենք Արարչի փոխարեն արարվածները պաշտել. մենք արարվածների միջոցով ընդունում ենք Աստծուն, Նրան երկրպագում: Հայրապետը Նոր Կտակարանից հիշեցնում է, որ Տերը սաստում է հանդիմանում է պարունակողներն անպատվողներին, ո-

րդախոսի ծառ կենաց, յորմէ արգենուս: Նախաստեղծն: Իսկ աստ խաչն լույսով փոխանակ Նորա ի նույն տակագործե՛ր կանգնեալ արմատացաւ եւ ծաղկեցաւ արեամբ նորուն, յորմէ միշտ կթե՛ն՝ որ ի տիեզերս հաւատացեալ՝ գպտուղն կենաց»:

Օձնեցի խաչի այս ստանալ ջատագովությամբ հասավ խաչքարային մշակույթի ձեւավորմանը: Ի հեճուկա աղանդավորների՝ նա մեծ տեղ էր հատկացնում խաչին: Պատահական չէ, որ համաձայն մի ավանդության՝ բյուզանդացիների դեմ պայքարելու համար երկնքից Օձնեցուն մի խաչաւիշ թուր է տրվում, որը նա կապում է մեջքին: Ընդհանրապէս շատ փայլուններ ցույց են տալիս, որ նա հայտնի է եղել նաեւ որպէս խաչի շնորհների գերագանց տիրապետող սուրբ:

Պաղատարական բացահայտումից եւ ջախջախումից զատ՝ Օձնեցին փակեց նաեւ բոլոր այն սողանքները, որոնք կարող էին հնարավոր պատճառ հանդիսանալ հերձվածության կյանքն ուրեւ գաղափարի ներթափանցման համար:

Այսպիսով՝ Հովհան Օձնեցու եռանդուն պայքարի արդյունքում աղանդավորների՝ Հայաստանում տարածման եւ զարգացման բոլոր փորձերը փակուղի մտան:

Աստղիկ ԱԿԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 19-ՐԴ դԱՐԻ 2-ՐԴ ԿԵՄԻՆ ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄՅԱՆ

Սկզբը՝ էջ 3

Ընտրության լուրը խրիմյանն իմացավ այն ժամանակ, երբ դեգերում էր Կարինի եւ Մուշի ճանապարհներին, հալածվում Ս. Կարապետի միաբանության կողմից: Վաղամեռիկ բանաստեղծ Պետրոս Պուրյանը մի բանաստեղծություն է նվիրում Նոր պատրիարքի գալստյան առթիվ, որը, ի դեպ, նրա առաջին տպագիր բանաստեղծությունն է եւ կրում է «Ի դիմաւորութիւն խրիմեան Հայրիկին» խորագիրը:

Նա կարիսմատիկ
ծիրանի փառքեր,
Նա սեւ է հագներ:


Նա ասում է, որ ի դեմս Նորընտիր պատրիարքի՝ հայությունը տեսավ իր «ազատութեան փող հնչեցնող մարգարէին»:

Իր ուխտի անդամակն ճառը խրիմյան Հայրիկն սկսեց այսպէս. «Ինձ մի նայեք որպէս Պուտ պատրիարքի: Ես պատկերն եմ Հայաստանի ցավերուն, եւ ստանձնեցի այս ծանր լուծը՝ նախօրոք խոստանալով ժողովրդին, որ պատրիարքությանս մեջ ազգիս թշվառությունը ազգօրէն պիտի ներկայացնեն տերության եւ դարման խնդրեմ...»: Եվ նա ընդմիջ տալիս արձակեց իր խոստմանը: Սակայն խաղաղ չընթացավ խրիմյանի պատրիարքության շրջանը: Ժողովրդի կողմից պաշտպանություն ստանալով՝ նա գրգռեց Բարձր դռան եւ պուստիայ երեւելիներին, որոնք պատրիարքի դեմ բացահայտ պայքար սկսեցին՝ անվանելով նրան «հակասահմանադրական», այն պատրվակով, որ խրիմյանը հայտարարել էր, թե «Սահմանադրությունը քովանդակ ազգի օրենքն է եւ ոչ թե միայն պոլսահայությանը»:

Ավարդում էր մոտենում ռուս-թուրքական պատերազմը, եւ անհրաժեշտ էր քայլեր ձեռնարկել ռուս-թուրքական համաձայնագրում հայության շահերն ըստ կարելիւն ներկայացնելու համար: Կ. Պոլսից 12 կմ հեռավորության վրա գտնվող Սան Ստեֆանո ծովափնյա ավանի ամառանոցում 1878 թ. փետրվարի 19-ին (մարտի 3-ին) ստորագրվեց ռուս-թուրքական պատերազմի արդյունքներն ամփոփող Սան Ստեֆանոյի պայմանագիրը: Կոնֆերանսի պատրաստվում էր եւ սուլթանական թուրքիան, որին օգնում է Ռուսաստանի դեմ էր տրամադրում Անգլիան: Անգլիական զարգութարարները ռուս-թուրքական պատերազմից փորձում էին օգտվել՝ իրենց շքսպանսիան Առաջավոր Ասիայում ընդլայնելու, սոր տարածքներ գավթելու համար: 1887 թ. վերջերին անգլիական մամուլն ահազանգում էր, թե Հայաստանը գրավվել է Ռուսաստանը փակում է Անգլիայի առեւտրական ճանապարհները: Ռուսականի առջեւ բացվում էին բոլոր ուղիները դեպի հարավ, դեպի Ներուցներ: 1878-ի հունվարի 14-ին անգլիական կաբինետը Պետրեղորգիի դեպիայի՝ Ավուստ Լոկտուսի միջոցով հայտնում է Ռուսական արտաքին գործերի մինիստր Ա. Մ. Գորչակովին, որ Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ կնքվելից համաձայնությունը, եթե հակապի Փարիզի եւ Լոնդոնի 1856 թ. եւ 1871 թ. համաձայնագրերին, անպայման կվերանայվի հիշյալ պայմանագրերն ստորագրած երկրների կոնգրեսում:

Երբ ռուսները մտան Սան Ստեֆանո, սուլթան Աբդուլ Համիդը հաջորդ օրը ցանկանում էր Բուսաս փախել: Շոգենալը կազմ ու պատրաստ սպասում էր գաղտնի վայրում: Սակայն անգլիական եւ ավստրիական դիվանագետները կանխեցին նրա մտադրությունը: Սուլթանն այլեւ այլ ելք չէր տեսնում ստեղծված վիճակից, քան խաղաղության պայմանագիր կնքելը: «Ամեն մարդ հաշտություն կուզէ, եւ միայն Անգլիա կհակառակի ասոր», - գրում է Կ. Պոլսի «Մասիւն»:

Սան Ստեֆանոյի՝ 29 կետից կազմված հաշտության պայմանագիրը նշանավորվեց որպէս բալկանյան քրիստոնյաների ազատագրման մանիֆեստ: Անկախ հռչակվեցին Սերբիան, Չեռնոգորիան, Ռումինիան (վերջինիս հանձնվեց նաեւ Հյուսիսային Դորբուջան՝ որպէս փոխառնուցում Ռուսաստանին անցած Բեսարաբիայի համար): Բուլղարիան դառնում էր ինքնավար իշխանություն եւ



Գործ՝ Կ. Սուրեյանցի

միայն որոշակի հարկ պիտի վճարէր Թուրքիային: Ինքնավարություն էին ստանում նաեւ Բոսնիան եւ Հերցեգովինան, Բոսֆորն ու Դարդանեղ զառնում էին բաց Ներուցներ՝ չեզոք պետությունների առեւտրական նավերի երթեւեկության համար: Ռուսաստանն ստանում էր 310 մլն ռուբլու ռազմատուգանք եւ տեր դառնում 1856 թ. կորցրած Բեսարաբիային (բացի Դանուբի գետաբերանում գտնվող կղզիներից), Արեւմտյան Հայաստանի 35.650 ք. կմ խոշոր մի հատվածի՝ Կարսին, Արդահանին, Բայազետին եւ մինչեւ Սողանլու (Մեծրաց լեռներ) ընկած տարածքին, նաեւ՝ Բաթումին: Պայմանագրի 16-րդ հոդվածում ասվում էր. «Նկատի առնելով այն, որ ռուսական զորքերի դուրս բերումը նրանց կողմից գրավված Հայաստանի՝ Թուրքիային վերադարձվելից վայրերից, կարող է այնտեղ առիթ տալ բախկունների ու բարդությունների, որոնք երկու պետությունների բարի հարաբերությունների վրա կունենան վնասակար ազդեցություն, Բարձր դուռը պարտավորվում է անհապաղ կենսագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ եւ բարեկուրտումներ եւ գերե պահել հայերի անվտանգությունը քրդերից եւ չեքեզներից»: Ըստ էության՝ Ներսես պատրիարքի եւ նրա համախոհների դիմումները շնորհիվ դաշնագրի մեջ մուծվեց մի հատուկ հոդված, որը, ինչպես նկատել է Միխայ Զեդնազ, «աղայաբներե ծնած էր»: Հոդվածը, սակայն, չէր որոշում, թե որոնք էին հայկական նահանգների սահմանները, ով պիտի ճշտեր տեղական կարիքները, բարեկուրտումների բնույթն ու ընդգրկումը: Այստեղից պարզ էր, որ ռուսական կողմի առաջնահերթ խնդիրն էր մնալ գրավված վայրերում, գործի դուրսբերումը պայմանավորել բարեկուրտումներ իրականացնելու անհրաժեշտությամբ: Թուրքական կողմը պաշտոնապէս ճանաչում էր Օսմանյան կայսրության սահմաններում Հայաստան երկրի գոյությունը: Ռուսաստանը հանդես էր գալիս որպէս հայ ժողովրդի պաշտոնական հովանավոր եւ անկողություն սահմանում Բարձր դռան կողմից իրականացվող բարաբալանության վրա: Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածով միջազգային դիվանագիտության խաղաղակա եւ մոնում Արեւմտյան Հայաստանի բարեկուրտումներ, հետագայում՝ անկախության խնդիրը՝ Հայկական հարց անվամբ, որը, սակայն, իր ներքին բովանդակությամբ արեւմտահայության եւ Արեւմտյան Հայաստանի ազատագրման հարցն էր:

Շարունակելի
մուշ ԿՐԱՍՈՐՅԱՆ

ՄԵՐ ՀԱՎԱՏԱՔՆՆԻՉԸ. ԱՍՏՎԱԾԱՄԱՐԴ ԵՎ ՄԱՐԴԱՍԱՏՎԱԾ

Սկիզբը՝ էջ 6

Պատմական խորապետ քրիստոնյա գրող էր: Ես չեմ ճանաչում ավելի քրիստոնյա մեկ այլ գրողի: Եվ Ղոստենկու քրիստոնեության շուրջ վեճերը սովորաբար մակերեսային բնույթ են կրում, խորքային չեն: Հատկապես ասում է Ստավրոգինիսը. «Արդյո՞ղ դուք չե՞ք ատում ինձ, որ մաթեմատիկոս եմ և քաղաքացի եմ, որ ճշմարտությունը Բրիտանիայի դուրս է, ապա դուք ավելի շուտ խնայողությամբ Բրիտանիայի հետ մնալ, քան՝ ճշմարտության»: Ստավրոգինիս այս նախադրյալը կարող էր հենց Ղոստենկուի ասած լինել եւ հավանաբար՝ ոչ մեկ անգամ: Իր ողջ կյանքի ընթացքում նա բացառիկ, եզակի վերաբերմունք պահպանեց Բրիտանիայի հետ: Եվ նա այն մարդկանցից էր, ովքեր հասնում Բրիտանիայի ավելի շուտ կիրառական ճշմարտությունների, քան՝ Բրիտանիայի: Նրա համար Բրիտանիայի դուրս ճշմարտությունն էր: Բրիտանիայի կերպարի նրա ընկալումը շատ կղբոտ էր եւ խորապետ մտերմական:

Ղոստենկու քրիստոնեության խորքն ամենից առաջ արտահայտվում է մարդու եւ մարդկային ճակատագրի հանդեպ նրա վերաբերմունքով: Մարդու հանդեպ նման վերաբերմունքը հնարավոր է միայն քրիստոնեական գիտակցության համար: Սակայն Ղոստենկու գործում այդ վերաբերմունքը ստեղծագործություն էր քրիստոնեության ներսում: Մարդու հանդեպ վերաբերմունքը, որ բացահայտվում է Ղոստենկուի երկում, ավելի խոր է Զոսիմայի եւ «Գործի օրագրի» ուսուցումներից: Այստեղ բացահայտվում է մի այնպիսի բան, որը դեռեւս չէր հանդիպել համաշխարհային գրականության մեջ:

Շարունակելի
Ռուսերենից թարգմ.
Գեորգե Եպս ՄԱՐԴՈՆԵԸ

Քլայվ ԼՈՒԻՍ

Սկիզբը՝ էջ 6

Հետեւաբար, մեր խնամարկային մեջ վախկոտություն ծնելու վտանգն առաջանում է, երբ մենք նրանց չենք դրոշմ իրական ինքնաճանաչման եւ ինքնախորշում, որոնց հետեւանքն ապաշխարությունն ու խոնարհությունն են: Փաստորեն, վերջին պատերազմում հազարավոր մարդիկ, հայտնաբերելով իրենց վախկոտությունը, առաջին անգամ հայտնաբերեցին բարոյական ամբողջ աշխարհը: Կաղաղության պայմաններում մենք նրանցից շատերին ենք կարողանում դրդել բոլորովին անտեղեկ բարին ու չարի, սակայն վտանգի դեպքում մեր խնայողական միջոցները ենք չտեսնում այն: Այսպիսով մենք կանգնում ենք մի դաժան երկսայրաբանության առաջ: Եթե մենք մարդկանց մեջ արդարություն ու ողորմածություն տարածենք, մենք կհաղթենք անմիջապես թշնամու օգտին, իսկ եթե մենք նրանց վարքն առաջնորդենք հավատակ ուղղությամբ, սա վաղ թե ուշ կծնի (քանի որ թշնամին դա թույլ է տալիս) պատերազմ կամ ինչպիսիք փոխություն, եւ վախկոտության կամ քաջության անընդարձակ ինդիքը հազարավոր մարդկանց կարթնացնի բարոյական թմբիկից:

Ամենայն հավանականությամբ, սա թշնամու շարժառիթներից մեկն է՝ վտանգավոր աշխարհի ստեղծելու, մի աշխարհի, որում բարոյական ինդիքներն իսկապես որոշիչ են: Նա նույնպես, ինչպես դու, տեսնում է, որ քաջությունը պարզապես առաքելություն:

Ներքից մենք չենք, այլ ամեն առաքելության կերպը փորձության պահին, այսինքն՝ բարձրագույն իրականության պահին: Վտանգի ենթակա ժողովուրդները, ազնվությունը կամ ողորմածությունը միայն որոշակի պայմաններում են ժողովուրդները, ազնվություն կամ ողորմածություն: Պիղատոսը ողորմած էր միայն մինչեւ դրա վտանգավոր դառնալը: Հետեւաբար, հնարավոր է կորցնենք այնքան, որքան ձեռք ենք բերում, եթե քո այդ խնամարկային վախկոտ դարձնենք. նա կարող է շատ բան սովորել իր մասին: Իհարկե միշտ հնարավորություն կա, որ ամոթի զգացումը ոչ թե թախա, այլ սաստկանա եւ հուսահատություն ծնի: Սա շատ մեծ հաղթանակ կլինի: Սա ցույց կտա, որ խնամարկային միայն այն պատճառով է հաճախ վատացել ու ընդունել, որ թշնամին ներել է իր մյուս մեղքերը, որ ինքն անձամբ լիովին չի զգացել իր մեղավորությունը, իսկ երբ ինքը լիովին հասկանում է իր մի մոլության անպատվության ամբողջ խորությունը, չի կարող ակնկալել ողորմություն իր հանդեպ կամ հավատալ որան: Բայց վախենա՛մ, թե դու արդեն շատ ես թույլ տվել, որ նա խորան թշնամու դարձնում ուսման մեջ եւ նա գիտի, որ հուսահատությունն ավելի մեծ մեղք է, քան այն ծնող որեւէ մեղք:

Ինչ վերաբերում է վախկոտության ծնելու փորձությունների գործունե միջոցների, շատ բան ասելու կարիք չկա: Գիտավորապես պետք է հիշել, որ նախազգուշացումները վախը սաստկացնելու հակում ու-



նեն: Սակայն հրապարակային նախազգուշացումները շուտով սովորական բան են դառնում եւ նրանց ազդեցությունը վերանում է: Ինչ որ պետք է անեն դու, այն է, որ խնամարկային մեղքում պիտի պահես (իր պարտականությունը կատարելու գիտակցից հաստատականության հետ մեկտեղ) անորոշ գաղափարն այն բոլոր բաների, որ նա կարող է կամ չի կարող անել՝ այն պարտականության շրջանակում, որը կարծես թե նրան մի փոքր ավելի ապահով է դարձնում: Նրա միտքը շեղիր պարզ կանոնից («Ես պետք է մնամ այստեղ եւ այս կամ այն բանն անեմ») դեպի կյանքի երեականական ուղիների շարքը («Եթե պատահի Ա-ն, թե՛ ես մեծ հույսեր ունեմ, որ չի պատահի, ապա ես կարող եմ անել Բ-ն, իսկ վատագույն դեպքում ես միշտ կարող եմ անել Գ-ն»): Կարելի է արթնացնել խնամարկային մեջ նախազգուշացումները, եթե դրանք որպես այդպիսին չեն ընկալվում նրա կողմից: Նպատակն այն է, որ նա զգա, թե ունի հեղեղում մի այլ բան, քան թշնամին եւ վե-

չինիս տրամադրած քաջությունը, որպեսզի այն, ինչ պիտի լինե՛ր պարտականությանը լիակատար նվիրում, ամբողջապես ներծծվի անգիտակցի փոքրիկ վերապահումներով: «Վատագույնը» խափանելու երեականական միջոցների շարքը կառուցելով՝ դու կարող ես խնամարկային կամքի այն մակարդակում, որին նա տեսնում է, ծնել մի հաստատականություն, որ վատագույնը ոչ մի դեպքում պիտի չպատահի: Իսկ հետո՞ իսկական ահաբեկման պահին, այդ հաստատականությունն իսկույն նրա նյարդերի ու մկանների մեջ լցվում է դու կրեմենտի, թե ինչպես նա կկատարի այդ ճակատագրական գործողությունը, նախքան կհասկանա, թե քո նպատակն ինչ է: Հիշի՛ր, վախկոտությունից ծնված գործն է, որ արժեք ունի: Վախի զգացումն ըստ ինքյան մեղք չէ, եւ որքան էլ որ մենք դրանից հաճույք ստանանք, այն մեզ որեւէ օգուտ չի բերի:

Եւ սիրառատ բերի՝
ԽԱՆԴԱԿԻՉ
Շարունակելի
Մկրտչից
Թարգմանությունը՝ Ս. Ս. Ի.

Հայոց ցեղասպանությունը վերապրածների ժառանգները Վրաստանում

Այս խորագիրն էր կրում Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնում 2015 թվականի ապրիլի 4-ին կայացած՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի հիշատակի միջոցառումը: Լուսանկարիչ Սերգեյ Ֆիդանյանի նախաձեռնությամբ, «Հայարտուն» կենտրոնի աջակցությամբ եւ Վիրահայոց թեմի իովանա ներքո կազմակերպված հեղինակային լուսանկարների ցուցադրությունը կցվել էին Ցեղասպանությունից փրկվածների եւ Վրաստանում ապաստանածների ժառանգների պատմությունները՝ հայերեն, վրացերեն, ռուսերեն:

Ցուցադրությունը հետաքրքրությամբ դիտեցին եւ պատմություններն ընթերցեցին Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն Եպս Միրզայանյանը, Վրաստանում ՀՀ դեսպանության խորհրդական Կարեն Մելիքյանը, հոգեւոր հայրեր, թերիսահայ հա-



մայրիկ անդամներ, վիսպիսային ժամանած հայ համայնքի անդամներ:

Ողջունելով ներկաներին՝ Վիրահայոց թեմի մշակույթի բաժնի տնօրեն, «Հայարտուն» կենտրոնի ղեկավար Լեւոն Չիդիյանն անդրադարձ կատարեց ցուցադրության նպատակին:

Բոլոր ելույթն ունեցողները՝ Վան Բայրությունյանը, Կարեն Մե-

լիքյանը, Եսոբ Թադեոսյանը, Հենրիխ Մուրադյանը, Յուրի Մեյխուրով, Ֆիդանյանի Վեփվախեն, Ռուբեն Ռուկնյանը, Սամվել Մկրտչյանը, Անահիտ Բոստանյանը, Վիկտորյա Մաքսեմյան, Իրենա Օհանջանովան, արժեւորեցին հեղինակի մտահղացումը՝ վերապրածների պատմություններով աշխարհին ցույց տալ կատարված ոճրա-

գործությունը, հայ մարդու տեսակը եւ հայկական գեղի հզորությունը: Աջակցության համար երախտագիտություն հայտնելով Վիրահայոց թեմի առաջնորդին եւ «Հայարտուն» կենտրոնի ղեկավարությանը՝ լուսանկարիչ Մերգեյ Ֆիդանյանը ցուցահանդեսն անվանեց իր ներդրումը Հայոց ցեղասպանության 100-ամյակի հիշատակին՝ հայտնելով այն Ցավախիչում եւ քաղաքային Երեւանում ցուցադրելու նպատակի մասին:

Վերջում Վազգեն Եպս Միրզայանյանը, իր օրհնությունը բաշխելով ներկաներին, կարեւորեց սփյուռքահայությանը դերն ու նշանակությունը Հայոց ցեղասպանությունը ճանաչելու եւ այն դատապարտելու գործում: Սրբազան հայրը կոչ արեց պատմականությունը պահանջել Ցեղասպանությունը կազմակերպող երկրից, նաեւ երախ-

տապարտ լինել այն ազգերին ու ժողովուրդներին, որոնք ապատանեցին փրկվածներին, ում օգնությամբ վերապրածների ժառանգները շարունակում են ապրել, արարել եւ գործել Մայր հայրենիքի եւ իրենց ապաստանած երկրի բարգավաճման համար:

Որոշվեց ցուցահանդեսի լուսանկարները եւ կցված պատմությունները հրատարակել առանձին գրքով:

Չատկական նվերներ անապահով ընտանիքներին եւ միայնակ ծերերին

2015 թվականի ապրիլի 4-ին Թբիլիսիի Սր Էջմիածին եկեղեցում անապահով ընտանիքներին եւ միայնակ ծերերին բաժանվեցին զատկական նվերներ:

Վրաստանի հայ կանանց «Շուշանիկ» միության նախաձեռնությամբ, Վիրահայոց թեմի հոգեւոր հայրեր, եկեղեցու կնքադիր, «Ամենիս» խանութի, «Հայկական լավաշ» ընկերության եւ

այլ հավատացյալների աջակցությամբ, Զիսու Բրիտանիայի սուրբ հարության տոնի նախօրեին տոնական բարիքներով նվերներ ստացան 100-ից ավելի թերիսահայ բազմադասում եւ սոցիալապես անապահով ընտանիք, միայնակ ու հաշմանդամ ծեր:

Չատկական նվերներ բաժանելու գործողությունը Վիրահայոց թեմում արդեն դարձել է բա-

րի ավանդույթ, որ մեծ սիրով իրականացվում է Չատկաբարի հայոց եկեղեցում: Հետաքննում լինելով Բրիտանիայի հրաշափառ հարության տոնը բոլոր ընտանիքներում տոնական դարձնելու նպատակին՝ թերիսահայ հավատացյալներն իրենց օգնությունն են ցուցաբերում դրա կարիքն ունեցող ընտանիքներին:

Վիրահայոց թեմ

ԵՐԽՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրթական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ
«Բրիտանիայ Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր
Աստիկ Ստամբուլյան
Գրականական վարչակալ՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սր Էջմիածին
Էլեմիս՝ 571797
Էլ. փոստ՝ gh@etchmiadzin.am

astghikstam@gmail.com
web կայք
kh-tert.livejournal.com
krishayas.wordpress.com
Մտոր, տալաք. 16.4.2015 թ.
Տպագրանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ